24. ԴԱՐՎԻՇ ԹԱՔԱՎԵՐԸ

Մին օր հայոց Անի քաղաքին թաքավերը շորերը փոխում ա, դարվիշի շորեր կյենում, թաքավերութունը ուրան վեզիրին թափշուր անում, ինքը քյընում ժողովուրթին մըեչը, տրեսնա ժողովուրթը հունց ա ապրում, ուրան անա ռազի՞ յա, թա չէ, մին վեզիր էլ նըհետը յոր ա օնում, հընգյրութուն ընելի հետի։ Մին խիլլա՛ էլ վըեսկե, թընգյակին քարեր ա յոր օնում, քյընում։

Քյինում ըն, քյինը՞մ, շատ քաղաքնի, շեներք ըն ման կյամ, շատ մարթկանց նըհետ ըն նստում, եր կրենը՞մ, շատ խասյաթնի յըն տրեսնում, չար նան պարի, շատ պեներ ա ըտրանց կըլոխը կյա՞մ։

Վերչը շատ ըն քյինում, խրեգյ ըն քյինում, շատը նան խըրեգյը աստուծ կրգյիդա՛, հըսնում ըն մին անծանոթ երգյիր։

Թաքավերը վեզիրին ասում ա. — Քյինինք բազար, ախկադի նման փող հրվաքինք, տրեսնանք ժողովուրթը հունց ա քյոմա՛գյ անում ախկադներին։ Մինակ յրես բազարին էս կըլխան նի մըննիմ, տու էն կըլխան...

Իտի էլ անում ըն։ Թաքավերը մուտանում ա մին առուտուրականի, փող օգում։ Առուտուրականը քյոմա՛գյ ա անում, փող ա տամ։ Դարվիշը ռազի յա քյընում։

Էտ առուտուրականը ուրա՛ն գյա՛դին ասում ա. — Էտ ախկադին բուաը պահեցիք, ուրուգյունը մըեր տոն պըերիք։

Ուրուգյունը էտ դարվիշին ղոնաղ ըն կանչում։ Ասում ա. — Ցրես

կը կլլի, ամմա մունք էրկու հոգի լընք, ընդրան թողիլ չըմ, լրես կլամ։

Ծառեքը ետ ըն տրեռնըմ էն առուտուրականին ասըմ։

Առուտուրականը ասըմ ա. — Քյեցիք էրկուսին էլ պերիք, աշկիս լրան տրեղ օնին։

Էրկու դարվիշ քյընըմ ըն էն առուտուրականին տոնը։ Առուտուրականը լավ ղոնաղ ա անըմ էտ դարվիշներին, ասըմ. — Իմ տոնըս ծրեզ ղուրբան, հիշքան օզըմ ըք մնացիք ըստեղ, հիբը օզիք էս քաղաքան տուս կլյաք, կարող ըք տուս կլյաք։

Իտի մին քանի օր մընըմ ըն էտ քաղաքըմը։ Մին օր էլ էտ թաքավեր-դարվիշը բըզարըմը տրեսնըմ ա, մին մարթ օղտը կըղնըցըրալ ա բազարին մեչին, օղտին մեշկին էլ մին պուճուր օթախ տիրած, կանչըմ ա. — Հու վրեր օզըմ ա մին դոնըմ իմ օղտիս լրան տիրած պուճուր օթախին մեչին եշի, թող իցուն մանեթ վրեսկե տա՞։

Վեչ մինը մուտանըմ չի էտ պըլըխելունք մարթան։

Դարվիշը վրեր լըսըմ ա, մուտանըմ ա, իցցուն մանեթ վրեսկե փող տամ, էտ օթախին մրեչին եշըմ։ Վրեր եշըմ ա, օշը տանըմ ա, եր ընդնըմ։

Ժողովուրթը զարմանըմ ա, թա էտ դարվիշը խե՞ նրհախ տրեղան համ հրվաքած փողը, վերչի կրպրկնին տրվավ, համ էլ օշը տարավ։ Վեր դարվիշը օշը կըլօխըն ա հրվաքըմ, էտ օղտապանին անա հրրցնըմ ա. — Հիշքա՞ն փող տամ քու էտ օթախիտ։

— Իրեք հարուրիցցուն վրեսկե տո, քյե տամ։

Հրվաքված ժողովուրթին անա վեչ մինը մուտանըմ չի, դարվիշը էտ կումարը տամ ա, էտ օղտին լրա օթախը առնըմ։ Էտ օթախը մըն էլ մին հուրիփարի ախճիգյ։ Վրեր ժողովուրթը էտ ըխճրկանը տրեսնըմ ա, մընըմ ա մըլորվա՞ծ։ Գյիդըմ ըն, թա երդյինքան ա, էս երդյիրաս չի։

Էտ քըշեր կյամ ըն էն առուտուրականին տոնը։ Էքսը դարվիշ-թաքավերը ուրան վեզիրին ասըմ ա. — Տու ետ տրեռ քյինի պալատը, երդյիրը լավ կառավարի, լրես հալա ըստեղ կրենալու լրմ։

Դարվիշը ամման օր բազար ա քյընըմ, ամման ջուռա օտելի պեներ առնըմ, պըերըմ տամ էտ ըխճրկանը։

Վերչը ըտրա փողը պըրծընըմ ա։

Դարվիշը տրխուր նըստըմ ա, քընենքյ անըմ, թա էն մին օրը էտ ըխճրկանը հի՞նչավ պիտի պահի, ջուռաբաջուռա օտելի պեներ ըշտեզան ճարի, վեր փող չիկա։

Էտ ախճիգյը տրեսնըմ ա, վրեր դարվիշը, ախեր շատ ա բեքյեփ

մուտանըմ ա, կոլա̈վը ընգըմ, պաշըմ, ասըմ. — Սիրելի դա̈րվիշ, խե՞ յըս բեքյեփ, բա̈լքա̈ս ինձանա սա՞ռալ ըս, ամմա յըես քյըեզ շատ ըմ սիրըմ, տու ինձ էն կյող-ավազակին ծըեռքան ազադեցիր, քու վերշին կըպըկնիտ տըվիր, ինձ հետի մըեծ-մըեծ խարշեր ըրիր, բա մըհեկ խե՞ իտի յըս։

Դա̈րվիշը ետ ա տըեռնըմ էտ ըխճըկանը աշկին մըեշին եշըմ, ասըմ. — Չէ, քըմատաղ, յըես քյըզանա սառալ չըմ, յըես քյըեզ շատ ըմ սիրըմ, տու իմ աշկիս լո̈ւսըն ըս, կըլխիս թա̈քյըն ըս, իմ ջանս-ջիգյարն ըս, ամմա քյըզանա հի՞նչ կյեղիմ, փողըս պըրծալ ա։

Էտ ախճիգյը ըտրան իցցուն մանեթ վըեսկե յա տամ ո̈ւրա̈ն ծըեռքին կյեղած-պահած, իլա̈ծ-չիլա̈ծ լոխ փողը էտ ա ընում, ասըմ ա. — Դա̈րվիշ ջան, քնենքյ մի անիլ, օրախ կաց, ծըծաղի, էս փողըն էլ ինքյ կալ, քյընա բըզարան ջուռաբաշուռա, ամման ռա̈նգյի թիլեր առ, պըեր, գյարա̈ կյործիմ, տար թա̈նգյ կյինավ ծախի։

Դա̈րվիշը իտի էլ անըմ ա։ Սաղ քըշերը էտ ախճիգյը քո̈ն չի ինըմ, մին ղա̈շա̈նգյ գյա̈րա̈ յա կյործըմ։ Ուռութանա դա̈րվիշը եր ա կըենըմ, մընըմ մաթ մընացած։

Ախճիգյը ասըմ ա. — Սիրելի դա̈րվիշ, էս գյա̈րա̈ն տար բազար, ծախի, ամմա էրկու հարո̈ւրը իցցուն վըեսկա վեշ իվիլ, վըեշ պակաս, ծախիս վեշ, վեր շատ էլ տան, տաս վեշ։

Դա̈րվիշը էտ գյա̈րա̈ն տանըմ ա բազար, վեր ժողովուրթը տըեսնըմ ա, մընըմ ա մաթ մընացած, պըերաննին պեց ըրած, չըտեսի նման եշըմ ըն։ Դա̈րվիշը էտ գյա̈րա̈ն դո̈ւզ էրկու հարո̈ւր իցցուն վըեսկավ ծախըմ ա, օրախ-օրախ ամման օտելի պեն, թիլեր առած, կյամ տոն։

Իտիյոթունավ մին խիլլա̈ վախտ էտ քաղաքըմը ապըըմ ըն։ Ախճիգյը իտի գյա̈րեքյ ա կյործըմ, էն առուտուրականը տինըմ ա ո̈ւրա̈ն գո̈ւքյա̈նըմը ծախըմ։

Էտ ախճիգյը Հայաստանի զահմանեն տըենը, Իրանին շահին ախճիգյըն ա ինըմ։ Մին աշխարքիս հայտնի ղաշաղ ման կյալի վախտը ըտրան կյուղանըմ ա, պըերըմ Հայաստան, ըտըղան էլ անց ըն կըենըմ Ղարաբաղ, գյիդա̈լա̈վ վեր Շուշի քաղաքըմը շատ հարուստ առուտուրականնի կան, պըերըմ ա ըտեղ ծախըմ, հեռանըմ, քյընըմ, կըլոխը ջա̈նջա̈լա̈ ազադըմ։

Իրանի շահը հրամման ա տամ, ո̈ւրա̈ն երգյիրըմը լոխ սոքյ պահին, սըեվ կյենան։ Մարթիքյ ա ղարկըմ հըրևան երգյիրնին, ըխճըկանը ճարելի հետի։

Նըշանց ըն տամ էտ ըխճըկանը կյործած գյարեքյը, ասըմ.

Բալքյաս իստի կյործած գյըբոցը յրան ճընանչիք։ Իտի էտ ըխճըկանը հետան ման ըն կյամ ման, վեչ մին տըեղ ճարըմ չըն։ Վերչը Իրանի էտ մարթկանցից մինը ընգնըմ ա Շուշի-Ղալան, ըշտեղ էտ ախճիգյըն ար։ Տա քյինըմ ա բազար, համին էն առուտուրականին դուքյանըմը էն ըխճըկանը կյործած դյաբոցը նըման գյաբա ճարըմ։

Մուտանըմ ա, կյինը գյուդում, ասըմ.— էտ գյաբոցան ինձ շատ ա հարկավեր, էտ հո՞ւ վա՞ կյործըմ։

Դարվիշը մուտանըմ ա էտ մարթին, ասըմ. — Ցրես ըմ կյործըմ։ էտ մարթին էլ յոր օնըմ տանըմ տոն։ Քըշերը կըենըմ ըն։

էտ ախճիգյը մարթին ասըմ ա. — էս մարթը իմ աշկիս լավ չի ըրվըմ, էա ըշտեղ ա քյըեղ շհա՞ լ, վեչը-փոչ պիտեր շհա՞ծ էտ մարթը, պըլլորըս ըտրա տանե հա՞, օխծը ըտրա վիզավը փըթաթվե՞։

Վերչը մին թահրավ ըտրանք քոն ըն ինըմ։

Քըշերվա կըեսին էտ մարթը եր ա կըենըմ, տըեսնըմ ըտրանք քոն ըն, շորերը կյենըմ ա, ըտրանց քըթին տակին քընըցնող ճար ա տընըմ, պինդըմը քընըցնըմ, էտ ըխճըկանը յոր օնըմ, ծիյին թամքան կապըմ Արասխը անց կըցնըմ, տանըմ Իրան։

Էքսը էն առուտուրականը տըեսնըմ ա դարվիշը եկավ վեչ։ Կյամ ա տոն, տըեսնըմ դարվիշը խոր քոն նի մըտած։ Մին թահրավ ըտրան եր ա կըցնըմ։ Դարվիշը եր ա կըենըմ, տըեսնըմ կընեգյը կա վեչ, ղոնաղըն էլ չի կա՞։ Տա օզըմ ա, թա պըլանա, կյիժվի, ընդնի էն սարերը։

Վերչը էտ առուտուրականին ասըմ ա. — Ցրես պիտի քյինիմ իմ խելունք, կյեղեցիկ, մանները վըեսկե կընգանըս ճարիմ։ Ասըմ ա, ճընապար ընգնըմ, քյինըմ։

Շատ ա քյինըմ, թա խըրեգյ ա քյինըմ, շատը նան խըրեգյը ինքը կգյիդա՞, հըսնըմ ա մին երգյիր, տըեսնըմ սաղ ժողովուրթը կյարմուր ա կյեցալ։

Դարվիշը մուտանըմ ա մին մարթի, հըրցընըմ։ էտ մարթը, ասըմ ա. — Ա՛յ մարթ, բա գյուդում չը՞ս շահին հրամմանը, վեր պիտի քառասուն օր կյարմուր կյենան։ Շուտ ըրա տու վել կյարմուր շորեր կյեց, թա չէ շահը կըլոխտ կըտրել կտա՞։

— Ախեր սաբաբը հի՞նչ ա, վեր կյարմուր ըն կյեցալ։

էտ մարթն ասըմ ա. — Շահին ըխճըկանը հըրսանիքըն ա, համ էլ ղաչաղնին էտ ըխճըկանը փըխցրած ըն իլա՞լ, մին մարթ քյեցալ ա ճարալ, պերալ, մըհեկ էլ ուրան ախպորը տըղին յրան փըսակըմ ա։

Էտ վեր դարվիշը լըսըմ ա, ասըմ ա. — Ա՛յ մարթ հիշքան փող օգըմ ըս, կըտամ, մինակ ինձ մին պեն ասի։ Տըեսնամ էտ ըխճըկանը հո՞ւնց տըեսնամ։

Էտ մարթը վեր վըեսկուն անըմը լըսըմ ա, ասըմ ա. — Հաղա մին ծըեռք կյարմուր շոր պըերիմ, կյեց, ետնան կասիմ։

Տա կյարմուր շորեր ա պըերիմ, դարվիշը կյենըմ ա, ասըմ.

— Դարվիշ ախպեր, էտ ըխճըկանը տըսնալի հետի մինակ մին թահրը կա։ Ուրուգյունը յըես քյըեզ կըտանիմ շահին կոշտը, կասիմ, վեր տու օգըմ ըս մեչիդըմը ծառայիս։ Նա քյըեզ յոր կօնի մեչիդըմը կծառայիս։ Շահին ախճիգյը նան փըեսացուն կյալու յըն մեչիդ, մոլլին քըշտին փըսակվին, քյարինը կըտրին։ Էտ վախտը տու կարող ըս էտ ըխճըկանը տըեսնաս։ Ամման մունուտ տու պիտի սայաղ կըենաս, թա չէ, կըլոխտ տիրևի նման թըռչելու յա, յա քու կըլոխըտ, յա մին հավու կըլոխ ա ինելու։ Փըեսացուն էլ ա ինելու մեչիդըմը։

Իրեք օր, իրեք քըշեր մեչիդըմըն ըն ինելու, մըեր ադաթը իտի յա։ Էտ վախտը ղաստ ըրա ըխճըկանը տըես, խոսի, թա կարիս ըխճըկանն էլ եր կալ, փախի քու երգյիրըտ։

Էտ մարթը իտի էլ անըմ ա։ Ուրուգյունը քյինըմ ա շահին պալատը, շահին խընթրըմ, վեր էտ տըղին մեչիդըմը ծառա յոր օնի։ Շահը հրամման ա տամ, վեր յոր օնին։

Մին օր հըրսանիքին օրախ սաասը կյամ ա մեչիդը։ Շահին ախճիգյը նան փեսացուն մընում ըն մեչիդըմը, մընացած ղոնաղնին քյինում ըն ուրանց տընեը։ Շահին ախճիգյը քըշերը տուս ա կյամ մեչիդին հայաթը, ընդեղ տուխուր նըստըմ, լաց ինում, մըետը քըցըմ դարվիշին, ախ քաշըմ, ընդրա սըերտը դարվիշին յրան ար։ Լաց ա ինում լաց, էտ ախպուրին ճըիրավը իրեսը լվանըմ, էլհա նի մընընըմ մեչիդը։

Էրկունչի քըշերըն էլ ա իտի անըմ։ Դարվիշը էտ լոխ տըեսնըմ ա։ Իրեքինչի քըշերը փըսակը պիտի պըրծներ։

Դարվիշը ռիսկ ա անըմ, տուս կյամ էն հայաթին ըխպրին կոշտը, ըշտեղ էտ ախճիգյը կյամ ար, նըստըմ լաց ինըմ։ Ըտեղ ըտրանք ուրուր տըեսնըմ ըն, պըշպըշորվըմ, լաց ինըմ։

Ախճիգյըն ասըմ ա. — Դարվիշ, տու էս քըշեր պիտի էտ տըղին կըլոխը կըտրիս, թա կարեցիր կըտրիս, էնա հու յըես քունն ըմ, թա կարեցիր վեչ կըտրիս, էլ պըրծավ, էլ վեչ յըես, վեչ տու։

Դարվիշը ռազի յա կըենըմ։ Էտ ախճիգյը նի յա մընընըմ մեչիդին մեչի օթախը, նըշընածին ասըմ. — Հի՞նչ կինի, էս մեչիդին

ծառայողին ասիս կյա հաքյաթ ասի, քոնս տանըմ չի՞, համ էլ քըշերը էրգյա՞ն ա։

Իտի էլ անըմ ըն։ Դարվիշը կյամ ա վրեննին յրան կաղնած էնքան հաքյաթ ասը՞մ, վեր ըտրանց քոնը տանըմ ա։ Դարվիշը տրենակը հանըմ ա, էտ տղին սրերտը կոխըմ, ախճիգյը յոր օնըմ, փախչըմ։

Քյընըմ ըն, քյընըմ, շատ ըն քյընըմ, թա խըրեգյ ըն քյինըմ, վերչը մին ախպուրի քըշտի նստըմ ըն, թա դինջանան։ Ախճիգյը կըլոխը տինում ա դարվիշին ծընգնին, քոն ինըմ։ Դարվիշը ըտրա մազերը սըղալելիս տրեսնըմ ա խըղըտակին մազերին մեչին մին ճուղուպրի չանք պեն։ Ցավաշ-յավաշ հանըմ ա, տրեսնըմ մին շըղշողըմ բուլյանդի քար ա։ Մինչև դարվիշը էտ քարին եշիլը, մին մըեծ արծիվ դաստի քըշանըմ ա, քարը կըտուցավը չանթըմ, ետ թըռչըմ, մին մունուտի մեչի։

Դարվիշը մընըմ ա դարդի մեչի։ Ասըմ ա.— էս ախճիգյը քունըտեղա եր կըկենա, կգյիդա թա կյուղացալ ըմ, աշկըս յրան ա՞, էլ գյիղալ չի՞, թա էնա իմ խազնաս իտի քարերավ լիգյը, դափնաս լիգյը։ Բա էս հո՞ւնց անիմ, հո՞ւնց չանի՞մ, վեր լավ ինի՞։

Վերչը կյամ ա էն մըթկին, վեր քյինի էտ քարը ճարի։ Էտ ըխճըկանը թողըմ ա իտի քոն իլած, ինքը էն մըեծ ղուշին հետան քյընըմ, տրժեր տրեղերավ, սարնըեր պըցրանըմ։

Իտի սաղ քըշերը էտ ղուշին հետան ման ա կյամ, կարըմ չի քըթնի։ Ծրեքյը տալիս էտ ղուշըն էլ կորչըմ ա։

Դարվիշը ետ ա տրեռնըմ, կյամ էտ ըխճըկանը կոշտը, տրեսնըմ ախճիգյը կա վրեչ։ Դարվիշին ըտեղ թողինք, խաբարը տանք էտ ըխճըկանան։

Տա վեր եր ա կրենըմ, տրեսնըմ դարվիշը ըտեղ չի, մաթ ա մընըմ, գյուդում ա, թա ուրան թողալ ա, եր ա կրենըմ, քյինըմ հետան ման կյամ։ Վեր շատ ման ա կյամ, ճարըմ չի։ Մին տրեղա հըրցընըմ ա Անի քաղաքին ճընապան։

Վեր Անի քաղաքան մուտանըմ ա, մին չորանի անա ընդրա շորերը խընթրըմ ա, ասըմ. — Ա՛ չորան ախպեր, հինչ օղիս կրտամ, թաքյ լհա՞ քու շորերըտ ինձ տաս, իմը տու յոր օնիս։

Չորանը շորերը տամ ա։ Տա տրղամարթի շորեր ա կյենըմ, նի մընընըմ Անի քաղաքը, հունցու տրղամարթ մին մըեծ դուքյանըմ մին առուտուրականի քըշտի պրիկասչիկ ա նի մընընըմ։ Հալա՞ մին խըրեգյ վախտ անց կացած վե՞չ, աշկի յա ընգնում, հունցու լավ առուտուր անող։

Մըհեկ էլ դարվիշին անա խաբար տանք։

էս դարվիշը էտ ըխպըրին քըշտին վեր ճարըմ չի էտ ըխճըկանը, մընըմ ա մըլորված, նըստած։ Բիրդան տըեսնըմ ա էտ ըխպըրին քըշտին մին հափուռ վըեսկե։ Տա մընըմ ա մաթ մընացած։ Եշըմ ա տըեսնըմ մկները տափին տական վըեսկե յըն կըրըմ, ըտեղ թուփ անըմ, համ էլ ուրուր նըհետ խոսըմ, ասըմ. — էս դարվիշը խե՞ յա մաթ մընացալ աշխարքիս պըեներին յրան, էսքան վըեսկեն տափին տակին փըչանըմ ա, ինքը օգըմ չի տար տըեռնա էս վըեսկուն, էսքան հարըստոթունը թողած, ինքը մին ըրուլյանդի հետի յա քընենքյ անըմ։

Դարվիշը ասըմ ա. — էս արաղ ա, թա ըրըկյոճի։ Եր ա կըենըմ մին փադավ էտ փափուկ վըեղը քանղըմ, տըեսնըմ խիլլտ վըեսկե կա։ Լոխ յոր օնըմ, թուփ անըմ, խոտավ, ժանգյալով ծասկըմ, նըստըմ։ Ըտըղավ քյընող մին շենացի ըրըրան լըծած, պարկերը մաչին, քյընըմ ար ցորեն պըերի։ էտ ըրըրան կըղնըցնըմ ա, պարկերը տուս տամ, վըեսկավ լըցնըմ, տինըմ ըրըբին յրան, էտ մարթին էլ մին խիլլա վըեսկե տամ, ճընապար տինըմ։ Ինքը արաբան քըշըմ ծովին ղրաղը։ էտ ծովին ղրաղի շըհարան աղ ա առնըմ, պարկերին կըլոխը լըցնըմ, վեր գյիդան վեչ, թա վըեսկե յա, նավին յրան տինըմ, զարկըմ Անի քաղաքը, ինքը մընըմ ա, վեր էլհա ուրան սեր տըված, սեր առած ախճիգյը ճարի։

էտ դարվիշը քյինըմ ա շատ քաղաքնի ման կյամ, քյինըմ ա Սպահան, օրիշ թաքավերոթուննի, ամմա վեչ մին տըեղ ճարըմ չի։

Վըեսկավ նան աղավ պըեռնած նավերը էրգյան վախտ անց կենալանը ետը Անի յըն հըսնըմ։

Պեռները եր ըն տինըմ, ամմա տարը տուս չի կյամ։ էտ վախտը Անի քաղաքըմը աղ չի կար։ Ժողովուրթը առուտուրականներան աղ ար օգըմ։ էտ պրիկասչիկ ախճիգյը, տըղամարթի շորերըմ կյամ ա պայման կապըմ, վեր տարը տուս կյա՞, ապրանքը, յա փողը տան տըրուչը։

էտ աղին պեռները տանըմ ա դուքյանըմը ծախըմ։ Վըեր ծախըմ ա, տըեսնըմ ա տակը վեսկե յա՞, հալա գյուգում ա, թա աղը վըեսկե յա տըեռալ, աշկերին հըվատըմ չի, ետավ խազայինին ասըմ ա։

Խազայինն էլ ասըմ ա. — Վըեսկեն թող իտի էլ կըենա, վեր տարը տուս կըկյա տըրուչը կը տանք։

Դարվիշը անց ա կըենըմ Սպահան, Խորասան, օրիշ շատ քաղաքնի, ամմա վեչ մին տըեղ էտ ըխճըկանը ճարըմ չի։ Ճարը կըտրած էլհա ետ ա տըեռնըմ, էն ծովին ղրաղի մըեծ քաղաքը, ըշտըղան ուրան ապրանքը՝ աղը նան վըեսկեն նավավ ղարկալ ար Անի։ Ըն-

դըեղ բեքյեփ կազնած մըեթկ ար անըմ, մին էլ ա տըեսնըմ էրկու մարթ խոսելավ քյընըմ ըն։

Ըտրանց անա մինը ասըմ ա. — Էս դա̈րվիշին եշի, ո̈ւրա̈ն վըեսկեն թողած, ինքը մին անկյին քարի հետա յա շոռ կյամ, մին էլ մին ըլխճըկա հետա։ Էլ գյուղում չի, վըեր անկյին քարը ճարելու չի, ամմա էն ախճիգյը էն ա Անի քաղաքին մին առուտուրականի հարուստացընըմ ա, ընդրա պրիկասչիկն ա։

Դա̈րվիշը օզըմ ա մուտանա մին լա̈վ հըրցնի, ամմա էտ էրկու մարթը աշկան կորչըմ ըն։

Դարվիշը նավ ա նըստըմ, ճանապարվըմ Անի քաղաքը։ Վեր հըսնըմ ա, կըռանըմ ա վըեղան պաչըմ, մեղա կյամ, վեր էտքան վախտ անգար ա թողալ։ Ետավ հըրցնըմ ա աղին պըեռներին անա, ասըմ ըն, թա. «Էս հինչ հարուստ առուտուրականին պրիկասչիկը տարալ ա, քյինի, ընդրանա օզի»։

Դա̈րվիշը կյամ ա, էտ մագազինին առաչին կաղնըմ, տըեսնըմ ո̈ւրա̈ն սիրած ախճիգյը հեն ա ընդեղ, տըղամարթի շո̈րերավ կործ ա անըմ թայղի-թայղի։ Դա̈րվիշը մուտանըմ ա էտ առուտուրականին, խընթըրըմ, վեր քըշերը մին տըեղ տա, քոն ինի, էքսը քյինա̈լու վա թաքավերին կոշտը, վեր ո̈ւրա̈ն մին խըրեգյ քյո̈մա̈գյ ինի։

— Է՛, դա̈րվիշ ախպեր, բա թաքավերը ըստե՞ղ ա, վեր քյըեզ քյո̈մա̈գյ ինի, ընդրա տըեղը վեզիրն ա, նա քյըեղ հի՞նչ քյո̈մա̈գյ կանի՛։ Լհա̈ էս քըշեր դո̈ւքյա̈նին քըմակի օթախըմը կաց, էքուծ եր կըկըենաս, քյինիս։

Դա̈րվիշը խընթըրըմ ա, վեր էքսը էտ առուտուրականը մին մարթ ղարկի պալատը, վեզիրին ասի, վեր մին դա̈րվիշ ընդրան կանչալ ա։

Էտ առուտուրականը մընըմ ա մա̈թա̈լ էտ դա̈րվիշին իրեսը պեց ինելին հետի։ Տա տըրըկո̈ւսըմ ա, թա տըեսնաս սա հո՞ւ վա։ Էքսը մին խելունք մարթ ա ղարկըմ պալատը, էտ լոխ ասըմ...

Վեզիրը լոխ ըսկանըմ ա, դա̈ստի գյուղում ա, թա տա հու վա՛, հրամման ա տամ նազիր-վազիրնին կյամ ըն, ածողնի յա կանչըմ, հրամմայըմ ա քաղաքը զա̈րթա̈րին, լա̈վ-լա̈վ շորեր կյենան։

Դա̈րվիշը էտ առուտուրականին անա հըրցընըմ ա, ասըմ. — Կադարեցի՞ր խընթիրքըս։

— Կադարեցի։

— Դե վըեր կադարեցիր, մըհենգյ մին ծըեռք թա̈զա̈ շո̈ր տո ինձ, խստի համոթ ա վեզիրին նըհետ խոսիմ։ Ըտրան մին ծըեռք թա̈զա̈ շո̈ր ըն տամ, կյենըմ ա։

Դա̈րվիշը տըեսնըմ ա, վեր էտ առուտուրականը մին տըեսակ

տուխուր ա։ Տա մին էլ ա հանում կյեցին շորերը, էլհա դարվիշի շորերը կյենում, մուտանում էն տըղամարթի շորերը կյեցած ըխճըկանը։ Էտ ախճիգյը ճընանչում ա ուրան։ Ըտահանք ուրուր կոլավ ըն ընգնում, լաց ինում։

Էտ առուտուրականը գյուդում չի, թա էլ հի՞նչ անի, մընում ա շշկլված, աշկերին հըվատում չի՞...

Վեզիրը մըեծամըեծներին նըհետ, նազիր-վազիրներին նըհետ կյամ ա թաքավերին առաչը, ըտրա թաքավերական շորեր ըն կյեց տամ, ըտրան նան էն ըխճըկանը պալատ տանում։ Էտ ախճիգյը գյուդում չի ինում, թա դարվիշը հու վա՞։ Վեր տըեսնում ա թաքավեր ա, մընում ա զարմացած։

Դարվիշ թաքավերը թախտին նըստում ա, էն ախճիգյըն էլ թաքուհի յա տըեռնում։ Ըտրանք ժողովուրթին լավ ըն պահում։ Ուրանք էլ սերավ ըն ինում։ Ըտրանք հասին ուրանց մուրազին, մունք էլ հասնինք մըեր մուրազին... Ըրգյինքան իրեք խընձոր եր ընգավ. մինը՝ ասողին, մինը՝ կյըրողին, մինն էլ՝ լըսողին։